Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒսուցման պլանավորումը՝ Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչներին համապատասխան:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *Վարդենիս*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Բելբության Հասմիկ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *Ադայ Մելքոնյան*

ԱՌԱՐԿԱ՝ *Անգլերեն*

ԴՊՐՈՑ՝ *<<Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց>>*

Վարդենիս-2022

2. Բովանդակություն

1.Ներածություն……..3

2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ……5

3. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ…….....6

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ

ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ……8

5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....10

6. Փորձարարական հետազոտություն.....11

7. Փորձարարական դաս-1.....12

8. Փորձարարական դաս-2.....13

9.Վերլուծություն……14

10.Հավելված……15

1.Դասապլան-1……15

2.Դասապլան-2……17

11.Գրական ցանկ.....19

1.Ներածություն

Օտար լեզվի դասընթացի ծրագիրը պետք է ունենա իր ընդհանուր նպատակը, որը պետք է սահմանի դասընթացի ընդհանուր նպատակաուղղվածությունը՝ իր ընդհանուր տարեվերջյան վերջնարդյունքներով: Օտար լեզվի դասընթացի ծրագրում պետք է հստակ նշվի լեզվի իմացության համաեվրոպական համակարգի մակարդակը, որին իր տարեվերջյան վերջնարդյունքներով ձգտում է տվյալ դասընթացով ուսուցումն ու ուսումնառությունը:

Դասընթացի ծրագրի երկրորդ կարևոր բաղադրիչը առարկայական կարողությունների ձևակերպումն է: Օտար լեզվի դասընթացի ծրագիրը պետք է պարունակի տվյալ տարիքային խմբում, դասարանում ձևավորվող հետևյալ լեզվական կարողությունները՝ ունկնդրելու կամ լսելով հասկանալու, փոխներգործության տարրերով խոսելու, ընթերցելով հասկա2նալու, փոխներգործության տարրերով գրելու, մայրենիից օտար լեզու և օտար լե2զվից մայրենի գրավոր և բանավոր թարգմանելու:

Դասընթացի երրորդ կարևոր բաղադրիչը բովանդակությունն է: Ծրագրի բովանդակային ամբողջությունը ձևավորվում է նախագծային և թեմատիկ ուսումնառությամբ: Յուրաքանչյուր նախագիծ կամ ուսումնառության թեմա իր հերթին ունենում է իր նպատակը, ձևավորվող առարկայական (լեզվական) կարողությունները, բառապաշարը, գործնական քերականության լեզվական կառուցվածքները:

Դասընթացի ծրագիրը պետք է իրատեսական լինի: Այն պետք է համապատասխանի տվյալ դասարանի սովորողների նախնական առարկայական գիտելիքներին և կարողություններին: Ընդհանրապես, որևէ տարիքային խմբի, դասարանի համար առարկայական ծրագիրը կազմելիս ենթադրում են, որ ուսումնական տարվա սկզբում տվյալ դասարանի սովորողների առարկայական կարողությունները համընկնում են նախորդ ուսումնական տարվա տարեվերջյան վերջնարդյունքներին, ինչը շատ դեպքերում չի լինում: Այդ անհամապատասխանությունը վերացնելու համար դասավանդողները պետք է ուսումնական տարվա առաջին օրերին ախտորոշիչ առաջադրանքներ տան իրենց սովորողներին: Այդ ախտորոշիչ առաջադրանքների կատարումը մեծապես կարող է ուղղորդել դասավանդողներին սկսել իրենց դասընթացի ծրագրի իրականացումը ավելի ***անհատականացված աշխատանքային պլանով:***

Հայաստանում հանրակրթության օտար լեզվի իմացության վերջնարդյունքը՝ մակարդակը միշտ էլ սահմանվել է B1-ը: Նոր համակարգով առաջարկվում են հետևյալ մակարդակները ըստ կրթական աստիճանների՝

Տարրական դպրոց

4-րդ դասարանում ուսումնառության վերջնարդյունքները հավասարեցվում են A1 մակարդակին:

6-րդ դասարանում ուսումնառության վերջնարդյունքները հավասարեցվում են A2 մակարդակին:

Միջին դպրոց

9-րդ դասարանում ուսումնառության վերջնարդյունքները հավասարեցվում են B1 մակարդակին:

Ավագ դպրոց

12-րդ դասարանում ուսումնառության վերջնարդյունքները հավասարեցվում են լեզվական B2 մակարդակին: B2 մակարդակը անգլերենի AELTS միջազգային քննության 6 միավորն է (կամ էլ TOEFL-ի 90-ը), որով ընդունվում են աշխարհի ցանկացած համալսարան: Մեր կրթական օրենքը պահանջում է, որ միջին դպրոցն ավարտողը սովորի նաև ավագ դպրոցում՝ անկախ այն բանից, թե արդյոք ինչ մոտիվացիա ունի սովորելու. ուզու՞մ է կրթությունը շարունակել համալսարանում, թե՞ ոչ: Այս պայմաններում ուտոպիա է բոլորին պարտադրել օտար լեզվի B2 մակարդակը: Նույնիսկ շատ դիպլոմավոր մասնագետներ չունեն բոլոր բաղադրիչներով B 2 մակարդակ:

Գնահատման մասին

Գնահատման առումով հանրակրթության բոլոր ուսումնական առարկաներից առանձնանում է օտար լեզուն: Կարծում եմ, որ օտար լեզվի իմացությունը գնահատելիս պետք է հրաժարվել թվանշանային գնահատումից կրթական բոլոր աստիճաններում, քանի որ հստակ սահմանված են օտար լեզվի իմացության միջազգայնորեն ընդունված մակարդակները՝ A1, A2, B1, B2, C1, C2.

1.ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

Տարրական դպրոցում «Օտար լեզուներ» բնագավառի ուսուցման նպատակն է՝

- Առնվազն երկու օտար լեզվից լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների և կարողունակությունների ձևավորումը,
- Գրագետ, կապակցված գրավոր և բանավոր պարզ խոսք կազմելու, կարդալու, հասկանալու, վերարտադրելու հմտությունների ձևավորումը,
- Սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների մասին արտահայտվելու կարողությունների ձևավորումը,
- Սովորողների՝ տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու կարողությունների ձևավորումը,
- Սովորողների՝ տրամաբանական,2 ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտությունների և կարողությունների ձևավորումը,
- Այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրության և հարգանքի ձևավորումը:

Հիմնական (միջին) դպրոցում «Օտար լեզուներ» բնագավառի ուսուցման նպատակն է՝

- ԼԻԵՇ-ի B1 մակարդակին համապատասխան, օտար լեզվով հաղորդակցական կարողությունների զարգացումը,
- Կրթական տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքի (բառապաշար, քերականություն, ուղղագրություն,արտասանություն) զարգացումը,
- Սովորողի առաջընթացի ինքնագնահատման հմտությունների զարգացումը՝ համեմատելով իր գիտելիքը և կարողությունները տարբեր փուլերում,
- Նախկին ձեռքբերումների և սեփական սխալների հիման վրա սովորելու կարողությունների զարգացումը,
- Սովորողի՝ հասարակության մշակութային և լեզվական բազմազանությունը գիտակցելու և արժևորելու կարողությունների զարգացումը,
- Քաղաքացիական գիտակցություն դրսևորելու կարողությունների և հմտությունների զարգացումը,
- Սովորողների մոտ ազգային և համաշխարհային մշակույթների հանդեպ հետաքրքրության սերմանումը:

Միջնակարգ (ավագ) դպրոցում «Օտար լեզուներ» բնագավառի ուսուցման նպատակն է՝

- Ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում հաղորդակցվելու և գործելու ունակ, տարբեր լեզուների տիրապետող անձի ձևավորումը,
- ԼԻԵՇ-ի առնվազն B1 կամ B2 մակարդակի օտար լեզվով հաղորդակցական կարողությունների զարգացումը,

- Ընդարձակ զեկուցումներ, դասախոսություններ հասկանալու, փաստարկների բարդ շղթային հետևելու կարողունակության զարգացումը,
- Ժամանակակից խնդիրների վերաբերյալ հոդվածներ և գրավոր զեկուցումներ ընթերցելու և հասկանալու կարողունակության զարգացումը,
- Լեզուն կրողների հետ բավականին սահուն, հանպատրաստից, քննականորեն և հիմնավորված գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողունակության զարգացումը,
- Օտար լեզվով հաղորդակցումը որպես աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական գրավականի ընկալման սերմանումը,
- Օտար լեզվի դասերի ընթացքում ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների զարգացումը:

2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի բարեփոխման շրջանակում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայանում է մի շարք եվրոպական և ասիական, այդ թվում՝ տարածաշրջանի լեզուներով: Օրինակելի ծրագրում ընդգրկված է անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի և ռուսերենի լեզվանյութը, սակայն առաջարկվող ծրագրային շրջանակը կիրառելի է նաև այլ լեզուների ուսուցման համար: Հանրակրթության պետական չափորոշչով առնվազն երկուսի ուսուցումը պարտադիր պահանջ է: Հանրակրթական դպրոցներում երրորդ օտար լեզվի ուսուցումը կարգավորվում է ԿԳՄՍ նախարարի հրամանով: «Օտար լեզուներ» բնագավառը և այն ներկայացնող առարկաները միտված են աշակերտների շրջանում բազմալեզվության և միջմշակութային իրազեկության զարգացմանը: Բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատար լինելը, որտեղ օտար լեզուներով հաղորդակցությունն օգնում է ուսումնառողին զարգացնել իր կոգնիտիվ (ճանաչողական) կարողությունները, ինչպես նաև ճանաչել աշխարհը և այլ մշակույթներ, ներկայացնել իր մշակույթը այլ լեզուներով, հանդես գալ որպես ստեղծագործ և քննական մտածողությամբ օժտված անհատ, համագործակցել անձնական, խմբային, համայնքային և հասարակական հնչեղության հարցերի լուծման նպատակով:

Ընդհանուր առմամբ, օտար լեզուների դասավանդման նպատակն է ձևավորել տարբեր լեզուների տիրապետող անձ, որն ունակ է հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում:

Օտար լեզուների դասավանդման **նպատակին հասնելու ուղիներն** են՝

- Լեզվական գիտելիքների փոխանցումը և ձևավորումը,
- Յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների ու կարողունակությունների ձևավորումը,

- Օտար լեզվով հաղորդակցվելու և կոգնիտիվ (ճանաչողական) կարողությունների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը,
- Քննական մտածողության, հետազոտականության և հիմնավորված դատողունակության զարգացումը,
- Ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանումը,
- Միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի խրախուսումը,
- Ուսումնառողների նորարարական, ստեղծարար և համագործակցային կարողությունների զարգացումը:

Օտար լեզուներ բնագավառի դասընթացները նպատակաուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հետևյալ կարողունակությունների ձևավորմանը՝

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2. Սովորել սովորելու կարողունակություն,
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. Թվային և մեդիա կարողունակություն,
6. Մշակութային կարողունակություն,
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8. Տնտեսական կարողունակություն:

Օտար լեզուներ բնագավառի դասընթացները դասավանդվում են 2 – 12 դասարաններում՝ ընդգրկելով հանրակրթության բոլոր երեք աստիճանները, ընդ որում ռուսաց լեզվի դասավանդումը պարտադիր իրականացվում է 2-րդ դասարանից, իսկ երկրորդ օտար լեզուն՝ 2-րդ դասարանի երկրորդ կիսամյակից:

«Օտար լեզուներ» բնագավառի դասընթացների միջոցով սովորողի վերաբերմունքի, արժեքների, դիրքորոշման ձևավորումն ու զարգացումը, ըստ դպրոցի աստիճանների, ուղղակի հիմնված է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված և վերոնշյալ ութ կարողունակություններին միտված ակնկալվող վերջնարդյունքների վրա: Մնացած վերջնարդյունքներին «Օտար լեզուներ» բնագավառի դասընթացներն առնչվում են անուղղակիորեն կամ չեն առնչվում: Փաստաթղթի կից Հավելվածում թավ շեղատառերով նշված են այն վերջնարդյունքները, որոնց ձեռքբերմանը նպաստում են «Օտար լեզուներ» բնագավառի դասընթացները:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դասընթացներում ապահովվում է բովանդակության աստիճանական և պարուրաձև զարգացումը, որն արտացոլվում է ուսումնառողի առաջընթացի նկարագրիչներում՝ ըստ դասարանների:

Դասընթացի բովանդակային մշակման հիմքում ընկած են մի շարք առանցքային հիմնադրույթներ, մասնավորապես՝

- Օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
- Օտար լեզուն ուսումնառության և կոգնիտիվ կարողությունների հզորացման միջոց է,
- Օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական գրավականն է,
- Լեզվական փաստացի գիտելիքի՝ բառապաշարի, քերականական կանոնների կամ օրինաչափությունների տիրապետումը, առանց հաղորդակցական կարողունակությունների, ցանկալի արդյունք չէ, քանի որ լեզվական նյութը ծառայում է հաղորդակցության գերնպատակին,
- Օտար լեզվի դասընթացները տրամադրում են արժեհամակարգային և վերաբերմունքային կրթության և զարգացման անսպառ հնարավորություններ:

Դասընթացների կառուցման հիմքում ընկած է լեզվանյութի այնպիսի մատուցում, որը, պարուրաձև ընդլայնմամբ, ելք է ունենում դեպի հաղորդակցական կարողություններ՝ լսողական ընկալում, ընթերցանական ընկալում, բանավոր խոսք (մենախոսություն), գրավոր խոսք, ոխներգործություն(բաավոր և գրավոր): Այսպիսով՝ **այս դասընթացներում օտար լեզվով հաղորդակցական կարողությունների զարգացումը գերակա է լեզվի համակարգի իմացության նկատմամբ:** Դասընթացներում կարևորվում է վերը նշված բոլոր կարողությունների հավասարաչափ և զուգահեռ զարգացումը:

Դասընթացների բովանդակային կառույցում կարևոր հիմնասյուն է միջմշակութային իրազեկության բարձրացումը՝ առաջին հերթին ուսումնասիրվող լեզուների երկրների և մշակույթների, ապա ուսումնասիրվող լեզուների միջոցով այլ երկրների և մշակույթների, իսկ հաջորդիվ նաև սեփական երկրի և մշակույթի ճանաչման, իմաստավորման և արժևորման միջոցով:

Դասընթացների բովանդակային կառույցը հնարավորություն է տալիս սովորողներին հանդես գալ որպես **սոցիալական ակտիվ դերակատար**՝ օտար լեզուների ուսուցման ընթացքն ու ուսումնառության արդյունքը գործածելով այլ փոխանցելի կարողությունների՝ համագործակցայնության, քննականության, ստեղծագործականության զարգացմանը և հանդես գալով որպես սեփական համայնքի/երկրի և համաշխարհային հանրության մի մասնիկ:

Դասընթացների բովանդակային կառույցը ենթադրում է միջառարկայական կապեր հիմնականում հասարակագիտական առարկաների հետ, թեև չեն բացառվում նաև կապերը բնագիտական առարկաների հետ՝ բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման (CLIL) մեթոդաբանության շրջանակներում:

Ծրագրային նյութն ընտրված է այնպես, որ նպաստի սովորողների հետաքրքրությունների խթանմանը, ձևավորի այս կամ այն երևույթի վերաբերյալ սեփական կարծիքն արտահայտելու և հիմնավորելու մշակույթ: Բացի այդ, դասընթացների բովանդակությունը միտված է օգնել սովորողներին կարևորել հանդուրժողականությունը, հարգանքը, մեդիագրագիտությունը, կոնֆլիկտների խաղաղ լուծումը, մարդու իրավունքը, հավասար հնարավորությունները և այլն:

Դասընթացը նախատեսում է լեզվի հաղորդակցական ուսուցում՝ հնարավորինս զերծ մնալով լեզվի դասավանդման քերականական և թարգմանության մեթոդներից: Լեզվի հաղորդակցական ուսուցման մոտեցմամբ՝ լեզվանյութը մատուցվում է համապատասխան, ցանկալի է առութենտիկ, երբեմն և՝ ուսումնական հաղորդակցական համատեքստի մեջ: Հատկապես կարևորվում են տեսանյութերն ու ձայնագրությունները, ինչպես նաև լեզվակիրների կողմից գրված կամ նրանց հասցեագրված նամակները, բացիկները, լեզվակիր/բնախոս հանրույթում լայնորեն կիրառվող նշանները, պաստառները, քարտեզները, տեքստերը և այլն:

A1 և A2 մակարդակներում չի շեշտադրվում քերականական երևույթների տեսական կողմը, հաղորդակցական համատեքստից զերծ դրանց կիրառումները: Բառապաշարային միավորները և քերականական կառույցները/կաղապարները ներդրվում են որպես հաղորդակցության միջոց, ոչ թե լեզվահամակարգի տարր: B1 մակարդակում և այնուհետ՝ բառապաշարը, իմաստաբանական և քերականական երևույթները դիտարկվում են որպես առաջնայնորեն հաղորդակցական միջոցներ, որոնք նաև լեզվահամակարգի մի մասն են:

Հաղորդակցության բոլոր կարողությունների զարգացումը դասընթացներում ենթադրում է նաև անհատական և խմբային, հետազոտական և նախագծային աշխատանքներ, ցուցադրություններ, դերախաղեր, լեզվական բովանդակությունն ու հաղորդակցական կարողություններն արտացոլող արդյունքների ստեղծում (պաստառ, բացիկ, զեկույց, ներկայացում), որոնք նաև նպաստում են վերաբերմունքային և արժեհամակարգային վերջնարդյունքների ձեռքբերմանը:

7-րդ դասարանից հետո (B1 մակարդակ) դասընթացում կարևորվում է նաև սովորողների կողմից ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ ինչպես նոր տեղեկությունների և բովանդակության հայթայթման, այնպես և նոր մեդիա բովանդակության (բլոգ, փոդքասթ և այլն) ստեղծման միջոց:

4.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չափորոշչային վերջնարդյունքների ստուգումն իրականացվում է հաղորդակցական կարողությունների և Բլումի տաքսոնոմիայի տարբեր մակարդակներին համապատասխան գործողությունների համադրությամբ: Դասընթացներում հաղորդակցական կարողությունների կարևորումը ենթադրում է, ձևավորող և ամփոփիչ գնահատում: Հատկապես ամփոփիչ գնահատման բոլոր գործողությունները հիմնվում են ոչ միայն լեզվանյութի իմացության, այլ հաղորդակցական կարողությունների ստուգման վրա:

Տարրական դպրոցի արտաքին գնահատում իրականացվում է չորրորդ դասարանի ավարտին՝ տրամադրելով մեկ դասաժամ և գնահատվող աշխատանքի առաջադրանքները կազմվում են հաղորդակցական հինգ կարողունակություններից առնվազն երկուսի հիման վրա՝ օտար լեզվի ծրագրի չափորոշչում առկա տվյալ դպրոցի թեմաների, լեզվական գիտելիքի, վերջնարդյունքներին համապատասխան:

Հիմնական դպրոցի արտաքին գնահատում իրականացվում է իններորդ դասարանի ավարտին՝ քննության միջոցով, և գնահատվող աշխատանքի առաջադրանքները կազմվում են հաղորդակցական հինգ կարողունակություններից առնվազն երեքի հիման վրա՝ օտար լեզվի ծրագրի չափորոշչում առկա տվյալ դպրոցի թեմաների, լեզվական գիտելիքի, վերջնարդյունքներին համապատասխան:

Միջնակարգ դպրոցի արտաքին գնահատումը իրականացվում է քննության միջոցով, որի առաջադրանքները կազմվում են հաղորդակցական հինգ կարողունակություններից առնվազն երեքի հիման վրա և հաղորդակցական հինգ կարողունակություններից առնվազն երեքի հիման վրա՝ օտար լեզվի ծրագրի չափորոշչում առկա տվյալ դպրոցի թեմաների, լեզվական գիտելիքի, վերջնարդյունքներին համապատասխան, օրինակ՝ *ունկնդրում, ընթերցանություն և գրավոր խոսք:*

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում: Այս դասարանը կիսվում է և իմ խմբում սովորում են 10 աշակերտ՝ 4 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Անգլերերն անցնում են շաբաթական 3 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 1-ին ,2-րդ և 3-րդ ժամերին: Այս դասարանում ես փորձարական դաս չեմ արել քանի որ , այս դասարանում դասավանդում եմ անգլերեն առարկան և շատ լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի հմտությունն և կարողությունն այս առարկայից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում խմբային աշխատնքի միջոցով:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր "Modal Auxiliaries" can,may,must մոդալ բայերին : Դասաժամն սկսվեց ողջույնով,ներկա ,բացակա անելով և տնային աշխատանքի ստուգումով: Բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք «Մոդալ բայերը» թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ:Առաջարկեցի աշակերտներին մեկ,երկու,երեք հաշվել և կազմել 3 խումբ: Յուրաքանչյուր խմբին տրվեց հանձնարարություն ,առաջին խումբը պետք է ներկայացներ can, երկրորդ խումբը may ,երրորդ խումբը must մոդալ բայերը :Աշակերտներին բաժանեցի թերթիկների վրա գրված նախադասություններ,որտեղ պետք է լրացնեյին բաց թողնված մոդալ բայերը,պետք է խմբերը տարբերակեին ,թե որ խմբին է պատկանում տվյալ նախադասությունը և փոխանցեին CAN,MAY,MUST խմբերին : Այնուհետև բաժանվեցին խառը բառեր թերթիկների վրա, որոնք պետք է դասավորեին և կազմեին նախադասություններ:Առաջարկվեց յուրաքանչյուր խմբին CAN,MAY,MUST մոդալ բայերով կազմել դպրոցի կանոնակարգ:Առաջարկվեց խմբերին պանտոմիմաի միջոցով նկարագրել կամ բեմադրել իրավիճակներ ,որոնք կգուշակեին մյուս խմբերը:Առաջարկվեց խմբերին նկարել մի իրավիջակ ,որոնք կհամապատասխանեն տվյալ մոդալ բային:Առաջարկվեց բոլոր խմբերին երգել մոդալ բայերի մասին երգը https://youtu.be/InCdPzd2hDw. Երեխանները մեծ ոգևորությամբ կատարեցին առաջադրանքը և ըստ իրենց շատ հետաքրքիր անցավ:Խմբերը գնահատեցին մյուս խմբերի աշխատանքները:Կանոնակարգը փակցրեցին պատին:Բոլոր աշակերտները ակտիվ մասնակցություն ունեցան դասին նաև պահպանվեց միջառարկայական կապը երաժշտություն ,կերպարվեստ առարկայի հետ:

Հանձնարարվեց տնային աշխատանք,վարժություն 8,էջ 85։Հաջորդ դասին կցանկանամ զարգացնել երեխաների բանավոր խոսքը։

Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր “Clothes”: Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց ներկա, բացակայով ,տնային ախատանքի ստուգումով։Դասի սկզբին գրատախտակին գրվեց “Clothes”բառը և երեխաները մտագրոհ մեթոդով թվարկեցին հագուստի տեսակները ,ցուցադրվեց հագուստների նկարներ և երեխաները պետք է ասեին ինչ հագուստ է և ինչ գույն ունի: Առաջարկվեց աշակերտներին զույգերով աշխատանք ։Յուրաքանչյուր զույգ պետք է նկարագրեր իր զույգի հագուստը և կրած հագուստի գույնը, նաև զույգին (մազերը,աչքերը,դեմքը ,հասակը և այլն)։Գրատախտակի վրա նկարված էր մարդու ամբողջական պատկեր և դրված էր գծիկներ տարբեր հատվածներում։Աշակերտները պետք է անծանոթ բառերը գրեին տվյալ հատվածում ։Այս ձևով երեխաները հեշտությամբ կմտապահեն այն ։Առաջարկվեց տարբերակել սեզոնային հագուստը։Դասի ավարտին շակերտներին առաջարկեցի ինքնուրույն կատարել վարժություն 5-ը,էջ 83։ Տրված էր սյունակ ,որտեղից պետք է գտնեյին այնքան բառ որքան կարող էին: Դասը ավարտվեց գնահատումով և տնային աշխատանքի հանձնարարությամբ, վարժություն 6-ը,էջ 83։

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ աշակերտները կատարեցին խմբային և զույգերով աշխատանք: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն(ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ): Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ խմբային և զույգերով աշխատանքների միջոցով:

Դասապլան-1

Առարկա	անգլերեն	Ամսաթիվ	02.05.2022	Կիսամյակ	II	Դասարան V
Թեմա՝	Modal Auxiliaries (can,may,must)					
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թերթիկներ,պաստառներ*					
Դասի նպատակը՝	.Իմանալ մոդալ բայերը և կազմության ձևերը : .Զարգացնել թեմայի շրջանակներում պարզ և կարճ հարցերին հիմնավորված պատասխանելու կարողությունը: .Իմանալ մոդալ բայերի հարցական և ժխտական կազմության ձևերը:					
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ					
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան: Ասեն մոդալ բայերը: Դուրս բերել տեքստից մոդալ բայերը: Կազմել նախադասություններ դուրս բերված մոդալ բայերով: Նախադասությունները դարձնել հարցական և ժխտական: Պետք է իմանա տրված քերականական նյութը:					
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող Մեթոդներ		

5-րոպե 25-30 րոպե 5-10 րոպե 5-10-րոպե	Ողջունել , Լսում են ,պատասխանում են հարցերին։ Խմբեր են կազմում։ Մտածում են և կատարում հանձնարարությունը։ Փոխանցում են յուրաքանչյուր խմբին պատկանող նյութը։ Ներկայացնում են աշխատանքները :Բացատրում և քննարկում խմբերի աշխատանքը։ Գնահատում։ Բոլոր խմբերը պաստառի վրա Т-ձև աղյուսակում գրում են դպրոցի կանոնակարգ մոդալ բայերով: Թերթիկի վրա գրում են՝ Ինչ սովորեցին,ինչ թերըմբռնում ունեն և հանձնում են։ Հանձնարարում տնային աշխատանք։	Ողջունել ,ներկա,բացակա անել։Ստուգել տնային առաջադրանքը։ Բացատրում է առաջադրանքը,բաժանում է թերթիկները ,որոնց վրա գրված է առաջադրանքը։ Շրջում է դասրանում և հետևում երեխաների աշխատանքին։ ՈՒղղորդում և օգնում դժվարացող։ աշակերտներին։Լսում է խմբերի ներկայացրած աշխատանքները Ներկայացնում է դասի նպատակների կվերջնարդյունքների իր տարբերակը,հանձնարարում է յուրաքանչյուր աշակերտի թերթիկի վրա նշել իր կողմից նախատեսված վերջնարդյունքները սեփական ձեռքբերումների հետ,նշել նաև թերըմբռնումները՝ հաջորդ դասինանդրադառնալու։ Գնահատում է և տալիս տնային հանձնարարություն։	Ի՞նչ է մոդալ բայը։ Որո՞նք են անգլերենի մոդալ բայերը։ Ինչպե՞ս է կազմվում հարցական և ժխտական ձևերը։ Ունե՞ն անցյալ կազմության ձևեր։	Հարց ու պատասխան։ Խմբային աշխատանք։ Խառնված հերթականությունների մեթոդը։ Խմբային աշխատանք։ Հարց ու պատասխան

Դասապլան-2

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	20.04.2022	Կիսամյակ	II	Դասարան V	
Թեմա՝	Clothes						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառարան,նկարներ,թերթիկներ :*						
Դասի նպատակը՝	.Իմանալ հագուստների անվանումները անգլերենով: .Իմանալ հագուստների եզակի և հոգնակի թվերի կազմության ձևերը: Իմանալ հարցական և ժխտական ձևերը:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. .Հեշտությամբ սովորել և մտապահել հագուստի տեսակների անվանումները: .Նկարագրել ընկերների կրած հագուստները իրենց գույններով: .Տարբերել եզակի ու հոգնակի թվերը: .Համադրել և տեսակավորել հագուստի նկարները համապատասխան նկարների և բառերի հետ:						

Ժամ	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5-7 րոպե 25-30 րոպե 10-րոպե	Ողջունել ,նստել : Գրել հագուստի տեսակները գրատախտակի վրա։ Անծանոթ բառերը նշել բառատետրերում։ Գրել տառադարձական նշաններով : Զույգերով նկարագրել իրենց հագուստները և գույները։ ՈՒշադրություն են դարձնում եզակի և հոգնակի թվի կազմությանը։Փակցնում են նկարի վրա և ասում են հագուստի անվանումը : Կատարում են ինքնուրույն աշխատանք։	Ողջունում է ,ներկա բացակա է անում։ Ստուգում տնային հանձնարարությունը։ Գրատախտակին գրում է՛՛ Clothes՛՛ բառը։ Հանձնարարում է կատարել զույգերով ածխատանք։ Գրատախտակին նկարում է մարդու ամբողջական մարմին և դնում գծիկներ ։ Հանձնարարում է ինքնուրույն աշխատանք վարժ.5,էջ ։ Գնահատում է և հանձնարարում տնային աշխատանք։	Ի՞նչ է սա։ Ի՞նչ գույնէ։ Տարվա ո՞ր եղանակին են կրում տվյալ հագուստը։	Մտագրոհ Հարց ու պատասխան։ Զույգերով աշխատանք։

Գրականության ցանկ

1.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր «Անգլերեն լեզու»

2.Հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք /Լուսինե Գրիգորյան «Զանգակ» հրատարակություն 2019. Մաս 2